ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2025 թվականի հուլիսի 04-ի թիվ 3 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/12»**

Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային գույքի, փաստաթղթերի ոչնչացման սարքերի և հեռախոսային սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/12» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 02.07.2025թ. ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 04.07.2025թ. տրամադրված պարզաբանումը՝

<u>Հարցադրում</u>

«Հարգելի պատվիրատու, հանդիսանալով էլեկտրոնիկային ներկրող Հայաստանում կարող ենք վստահաբար ասել որ 5,6,7 չափաբաժինների համար կարող են մատակարարման փուլում առաջանալ խնդիրներ ժամկետների հետ կապված. Արդյոք Ձեր կողմից կերկարացվի մատակարարման ժամկետները թեթ նախապես դիմենք?»

<u>Պարզաբանում</u>

««ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/12» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծին (Հավելված 5) կից ներկայացված մատակարարման ժամանակացույցով 5-րդ, 6-րդ, 7-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների (այսուհետ՝ ապրանքներ) մատակարարման ժամկետը սահմանված է՝ պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 60 օրացուցային օր: Ապրանքների մատակարարման ժամկետի երկարաձգման պայմանները սահմանված են հիշյալ պայմանագրի նախագծի 8.8 կետով: Ապրանքների մատակարարման ժամկետի երկարաձգման վերաբերյալ վաճառողի առաջարկությունը գնորդի կողմից կքննարկվի՝ ապրանքների մատակարարման փուլում պայմանագրով սահմանված ժամկետում ապրանքների մատակարարման անհնարինության վերաբերյալ վաճառողի կողմից հիմնավոր պատճառաբանություններ ներկայացվելու դեպքում՝ պահպանելով վերոնշյալ պայմանագրի նախագծի 8.8 կետով սահմանված պայմանները:»

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/12» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Գայանե Դադիվանյանին:

Հեռախոս՝ 010 511-783:

Էլեկտրոնային փոստ՝ ddgnumner@court.am:

«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/12» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: